




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

390

ՀԱՅԷԼ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ. ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ

344.4:63

ՈՒՂԵՑՈՒՅՑ - ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԵՌԱԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ



Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 3 1

Սոցիալիստական շինարարության ծավալուն արշավը և օրցիալիզմի ֆունդամենտի կառուցումը բոլոր ֆրոնտների համար իրեն հրամայական պահանջ առաջադրել է կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրը:

Կադրերի այս արագ վերապատրաստումն իր վողջ սխտեմի մեջ պետք է ընդգրկի վոչ միայն կայուն և հիմնական ուսումնական հիմնարկների բոլոր տիպերը, այլև ոժանդակ ուսուցման ձևեր, առաջին հերթին հեռակա ուսուցման կազմակերպումը:

Գյուղատնտեսության վերակառուցման կադրեր տալու և յեղածը վերապատրաստելու համար կազմվող հեռակա ուսուցման ռժանդակ ձևի նպատակն ու խնդիրներն են՝

ա. Հեռակա ուսուցումը ամբողջությամբ հարմարեցնել գյուղատնտեսության վերակառուցման պահանջներին:

բ. Կենդանի կապ հաստատել տեսական և արտադրական ուսուցման մեջ՝ չկտրելով աշխատողին իր արտադրությունից:

գ. Հեռակա ուսուցումն մասնակից դարձնել հանուն կոլեկտիվացման, տնտեսական քաղաքական կամայնիքների և այլ կարեւոր բազույն ձեռնարկումների արտփին—պլանների կենսագործմանը,

դ. Հեռակա ուսուցման աշխատանքները (թե անհատական ինքնուրույն և թե մասնավորապես հավաքական—կոլեկտիվ) տանել սոցմրցման և հարվածայնության ձևերի կիրառմամբ:

1. ԳՈՐԾՈՂ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Գյուղատնտեսության սոց. վերակառուցման գործին կադրեր տալու նպատակով Հ. Ս. Խ. Հ. Հողօգտագործատին յենթակա կայուն դպրոցական, գիտահետազոտական հիմնարկների գիտահետազոտական սխտեմի մեջ ընդգրկվում են առաջում Հ. Ս. Խ. Հ. գյուղինստիտուտ և Յերեվանի գյուղատնտեսական տեխնիկումը:

1. Առաջինը գործում է իբրեւ հեռակա ուսուցման կենտրոնական ինստիտուտ, նպատակ ունենալով պատրաստել և վերապատրաստել բարձր վորակի գյուղատնտեսներ:

2. Յերկրորդը հետևյալ ուսուցման դասընթացներն են՝
Յերեմիայի գրքը—Տեխնիկումին կից, նպատակ ունենալով պատրաստել
և վերապատրաստել միջին վորակի գյուղատնտեսներ ագրո-տեխնիկ-
ներ յեղ գոտեխնիկներ:

Հեռուսխնատիտուտին և հեռ-ուստեխնիկում-դասընթացնե-
րին նպաստելու համար խոշոր կոլեկտիվներ, խոբ-տնտեսու-
թյուններ, հող-որգաններ, գյուղատնտեսական միավորումներին
կից կազմակերպվում են ոժանդակ հեցակետեր, լեթե համախմբված
հեռակայողների թիվը 15-ից ավելի չեն:

ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

3. ՀՄԽ Գյուղատնտեսական Ինստիտուտին կից կազմա-
կերպված Կենտրոնական Հեռ. ուս. Ինստիտուտը գործում է ա-
ռայժմ չերկու ֆակուլտետներով և ստորևի հիշված ցիկլերով:

1) Բուսաբանական—դաշտավարական

ա. Տեխնիքական կուլտուրաների բամբակ, ծխախոտ և այլն)
բ. Կերպրույաների

գ. Հացահատիկների—ցիկլերով:

2) Գյուղատնտեսական

ա. Վազանդակման—գինեգործական

բ. Պտղաբուծական—բանջարաբուծական

3. Հեռուսխնատիտուտի տեխնոլոգիաներ չերեք տարի չեն, սա-
կայն յուրաքանչյուր ուսանող իրավունք ունի այս ժամանակա-
շրջանն ավարտել ավելի կարճ՝ 2-տարի և ավելի չերկար մինչև
5-տարի ժամանակաշրջանում:

Ինստիտուտավարտողներին տրվում է գյուղատնտեսի կուլում:

5) Ընդունելության պայմաններ

1. Իբրև կանոն հեռուսխնատիտուտ ընդունվել կարող են
միայն գյուղատնտեսության ֆրոնտում աշխատողները և ամիջա-
պես Գյուղ—տեխնիկում ավարտողները՝ միայն Բ-րդ կուրսում:

6. Ընդունելությունները կատարվում են ամբողջ տարվա
ընթացքում անընդհատ, առաջին և չերկրորդ կուրսերում միաժա-
մանակ:

Ծանոթություն. — Բ-րդ կուրսը գործում է միայն պարա-
բուծական ֆակուլտետով:

7. Առաջի կուրսն ընդունվել կարող են՝

ա) Կոլեկտիվներ և գյուղատնտեսական բանվորներ ու
նրանց զավակներ:

բ) Տեխնիկներ, բրիգադիրներ և ընտրական ձայնի իրա-
վորունք ունեցող ֆինացած բոլոր աշխատավորներ, վորոնք ցան-
կություն ունեն վորակավորվել և բարձրագույն կրթություն
ստանալ:

8. Բ-րդ կուրս ընդունվել կարող են միայն՝ ա) գյուղա-
տնտեսական տեխնիկում ավարտողներ. բ) նախկին գյուղատն-
տեսական ֆակուլտետների ա. կուրսերում սովորած և զանազան
պատճառներով ուսումը կիսատ թողած անձինք, վորոնք ներկա-
յումս աշխատում են Գյուղատնտես. բնագավառում և ցանկու-
թյուն ունեն ուսումը շարունակելու:

Ծանոթություն. — ա. և բ կետերով 2-րդ կուրս ընդուն-
վող բոլոր ուսանողները պարտադիր կերպով
չենթարկվում են լրացուցիչ ստուգումների
Ինստիտուտի համար սահմանված կարգով (Տես
առարկանների և ծրագրերի բաժինը):

Կրթական ց ե ն գ յե վ սս ա մ.

9. Հեռուսխնատիտուտի առաջի կուրսեր ընդունվելու համար
սահմանվում է միջնակարգ կրթություն և առնվազն չերկու տար-
վա (կազմակերպված տնտեսության) արտադրական ստաժ:

Ծանոթություն. — Յերեքից հինգ և ավելի տարիների
ստաժ ունեցող գյուղատնտեսական բանվոր-
ներն ու հարվածայիններն իբրև բացառություն
ընդունվում են նաև այն դեպքում չերբ ունեն
միջնակարգ թերի կրթություն:

10. Պարտադիր պրակտիկա

1. Բոլոր հեռակայողների համար անխտիր սահմանվում է
արտադրական 15—միամսյա պարտադիր պրակտիկա և լաբորա-
տոր աշխատանքներ, անմիջապես կենտրոնում, համապատաս-
խան դասախոսների ղեկավարությամբ: Այս ժամանակաշրջանը
ցանկալի չե համարվում սահմանել ձմեռը—հունվար ամիսը:
Պրակտիկայի ժամանակաշրջանը յուրաքանչյուր հեռակայողը հար-
մարեցնելու չե իր աշխատանքներին:

2. Առաջադրությունների հետ կապված գործնական—լաբո-
րատոր մշակումները հեռակայողը կատարելու չե տեղի վրա, տե-



դեկան ուսումնա— ոժանդակ հիմնարկների լաբորատորիաներում և հիմնարկներում:

11. Ուսման վարձ

Բոլոր հեռակայողների համար անխտիր սահմանվում է ուսման վարձ:

ա. Կոլտնտեսականների և գյուղատնտեսական բանվորների համար տարեկան 60-ռուբլի՝ չորս նվազ վճարումով:

բ. Մնացած կատեգորիաների աշխատավորների համար տարեկան 100 ռ. չորս նվազ վճարումով:

3. Հեռակա ուսուցման գյուղատնտեսական սեխնիկում (դասընթացներ)

12. Յերեվանի Գյուղատնտեսական տեխնիկումին կից կադմակերպվում է հեռ. ուս. տեխնիկում առաջժամ հետևյալ բաժանմունքներով՝

1. Դաշտավարական — (բամբակագործական թեքումով)

2. Առանաբուծական — 2 — հիմնական թեքումներով՝

ա. Կաթնատնտեսական, բ. կերաբանական:

13. Հեռակա ուսման տեխնիկումի տեվդուլթյունը 3 տարի է, սակայն այստեղ ևս յուրաքանչյուր ուսանողին իրավունք է վերապահվում անցնել ավարտել ավելի կարճ, այսինքն 2 — տարում և ավելի չերկար՝ 5 — տարում:

Տեխնիկում ավարտողներին տրվում է միջին վոքալի գյուղատնտեսների ագրոտեխնիկների, գոտսեխնիկների կոչում:

4. Ընդունելության պայմաններ

Հեռուստեխնիկում ընդունվում են՝

ա) գյուղատնտեսական բանվորներ (բանվոր հարվածայիններ, մանավանդ հարվածային բրիգադիներ):

բ) Աշխատանքի կազմակերպիչներ:

գ) Տասնամյակներ, դ. Կոլտնտեսներում, սովխոզներում ակտիվ աշխատողներ և առաջ քաշվածներ, վերոնք նպատակ ունեն վորակավորվել. ե. գյուղատնտեսության բնագավառում աշխատող և քնտրական ձայնի իրավունք ունեցող այլ քաղաքացիներ:

15. Կրթական ցենզ յեվ արտադրական ստաժ

Բոլոր ընդունվողներից պահանջվում է յոթնամյա լրիվ կրթություն և վոչ պակաս 2—5 տարվա ստաժ:

Մանրություն.— 3—5 տարի և ավելի ստաժ ունեցող գյուղատնտեսական բանվորներն ու հարվածա-

յիններն իրեն բացառություն ընդունվում են այն դեպքում, ինքն ունեն ամենաքիչը 4—5 դասյա կրթություն:

16. Ուսման վարձ

Բոլոր հեռակայողների համար անխտիր սահմանվում է ուսման վարձ:

Հեռուստեխնիկում ընդունվող բատրակների, կոլխոզնիկների և գյուղատնտեսական բանվորների համար սահմանվում է տարեկան 30 ռուբլի (3—նվազ վճարումով), իսկ մյուս կատեգորիաների համար 60 ռ. (4—նվազ վճարումով):

17. Ընդունելությունների սեվդուլթյունը հեռակա տեխնիկումներ յեվ բ. ս. հ. երում

Ընդունելությունները կատարվում են անընդհատ ամբողջ տարվա ընթացքում:

18. Պարտադիր պրակտիկա

Հեռուստեխնիկումների հեռակայողների համար սահմանվում է տարեկան միամսյա պարտադիր պրակտիկա: Այս ժամանակաշրջանն յուրաքանչյուր հեռակայողը հարմարեցնելու իր աշխատանքներին: Իբրև պարտադիր պրակտիկայի ամիս ցանկալի չե համարվում հունվար ամիսը: Գործնական—լաբորատոր պրակտիկան կատարվելու չե Յերեվանում:

Առաջադրությունների հետ կապված գործնական լաբորատոր աշխատանքները տարվելու չեն տեղի վրա Գյուղատնտես. ոժանդակ հիմնարկներում և դպրոցներում:

Հենակետերում այս աշխատանքները տարվելու չեն կադմակերպված ձեվով և կենտրոնից չեկած հրահանգչի միջոցով:

19. Հեռակայողի ընդունելության անկեսա (բոլոր սիպերի համար)

1. Ազգանուն, անուն, հայրանուն

2. Աշխատանքի վայր

3. Փոստային ճիշտ հասցեն

4. Վոր ֆակուլտետն է ուզում ընդունվել, վճի կուրսը

5. Ծննդյան թիվը

6. Սոց. դրություն

7. Հիմնական գրագմունքը

8. Այն հիմնարկը, վորտեղ աշխատում է և պաշտոնը

9. Վեր պրոֆմիտիւթյան անդամ ե, տոմսի №-ը
10. Կուսակցականութիւն
11. Կրթութիւն
12. Սոց. ծագումը ըստ ծնողների,

ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

Անկեցան պեժ ե հաստատվի սեղկովի, հիմնադրի կամ օրգանի-
ութեան կողմից:

20. Հեռակա ընդունելութիւնները կատարվում են թե ան-
դի վրա և թե փոստային առաքումներով միջոցով: Դիմում տվող
հեռակայողը ընդունվելուց հետո, մուծում է անմիջապես վարձի
1/4-ը, ստանում համապատասխան վկայագիր և առաջադրու-
թիւններ:

21. Հեռակայողի իրավունքների մասին

Հեռակայողը նույն իրավունքներն ու արտոնութիւններն է
վայելում, ինչ տվյալ կայուն հիմնարկի ուսանողը, ավարտելուց
հետո օտանալով համապատասխան կոչում:

22. Հեռակայելու իրավունքից զրկվելը

Հեռակայողը իր իրավունքներից զրկվում է, յերբ առանց
հարգելի պատճառի մինչև 5-ամիս և ավելի ժամանակաշրջանում
չի մասնակցում աշխատանքներին: Կի պատասխանում առաջադ-
րութիւններին և խուսափում է հեռակայողի պարտականու-
թիւններից ընդհանրապես:

Հեռակայողին իրավունք չի տրվում մի կամ ավելի տարի
հեռակայող դառնալուց, այս կամ այն կուրս ավարտելուց հետո
փոխադրվել նույն տիպի կայուն հիմնարկում իրեն հաջորդ կուր-
սի ուսանող:

Հեռակայողի ինքնակամ հեռանալու կամ հեռացվելու դեպ-
քում մինչ այդ տրված ուսումնական վարձը չի վերադարձվում:

23. Հ ե ո ա կ ա ուսման ծրագիրը

Հեռակա ուսման ծրագրերը ուղարկվում են հեռակայողին-
րին առաջադրութիւնների հետ միասին:

24. Հեռակայողների ուսման վարձի վճարելու կարգը

Բոլոր հեռակայողների համար սահմանվում է ուսման վարձը
վճարելու ժամկետ: Ամեն մի հեռակայող պետք է լավ հիշի իր
ժամկետը, վորպեսզի նյութերի առաքումների ընդհատում առաջ
չբերի:

Յեթե հեռակայողը ուսման վարձի 1-ի նվազը վճարել է	Պ ե ա ջ ե վ ճ ա ր է		
	2-րդ նվազը	3-րդ նվազը	4-րդ նվազը
1. Սեպտեմբերին	Նոյեմբերին	Փետրվարին	Մայիսին
2. Հոկտեմբերին	Հունվարին	Մարտին	Մայիսին
3. Նոյեմբերին	Հունվարին	Ապրիլին	Մայիսին
4. Դեկտեմբերին	Փետրվարին	Ապրիլին	Մայիսին
5. Հունվարին	Մարտին	Ապրիլին	Մայիսին
6. Փետրվարին	Ապրիլին	Մայիսին	Հունիսին
7. Մարտին	Ապրիլին	Մայիսին	Հունիսին
8. Ապրիլին	Մայիսին		
9. Մայիսին			

3-րդ և 4-րդ նվազները միասին՝
հունիսին, մնացած նվազները
միասին՝ հունիսին:

Բոլոր առաջադրութիւնները ուղարկվում են ուսման վար-
ձի մուծման համապատասխան — օրինակ այն հեռակայողը, վոր
ուսման վարձի 1/4-ը վճարել է ասենք 1931 թ. սեպտեմբերին,
ստանում է ուղեցուցը և 2 առաջադրութիւններն անմիջապես,
իսկ մյուսները հաջորդաբար և վորոշ ժամկետներով:

Յեթե ուշ գրվող հեռակայողը ցանկանում է առաջուց զըր-
վածներին հավասար, այսինքն մինչև իր գրվելը լույս տեսած
առաջադրութիւնները միանգամից և ապա մյուսները հաջորդա-
բար ստանալ, այդ դեպքում նա պարտավոր է գրվելու ժամա-
նակ մտցնել այնպիսի գումար, վոր մինչև այդ վճարել են մյուս
հեռակայողները:

Յեթե մեկը ցանկանում է ընդունվել առաջուց ընդունված-
ների խմբակը, նույնպես պետք է մտցնի նրանց հավասար ուս-
ման վարձ և ընդհակառակը — ուսման վարձը սահմանված ժամկե-
տից ուշ վճարողները փոխադրվում են ուշ ընդունվածների խմ-
բակը: Հետ մնալու այս հանգամանքը կարելի է վերացնել մի-
միայն ուշացած ուսման վարձը վճարելով:

Իրամը հեռակա ուսման քյուրոյի անունով փոխա- դրելու կարգը

Քյուրոյի անունով դրամ փոխադրելու պետք է կատարել
հետևյալը՝ ա) դրամ փոխադրելու տալոնների վրա չպիտի գրել
դրամական հարցի հետ կապ չունեցող վոչ մի բան, բ) լրիվ կեր-

պով գրել դրամ փոխադրողի ազդեանքն, անուն և հալբանունը, ֆակուլտետը և ցիլլը, կուրսը, անձնական գործի համարը և փոստի ճիշտ հասցեն: Դրամ ստանալու մասին Բյուրոն հեռակալողներին վոչ մի տեղեկանք չի ուղարկում, ինչպես և այդ առթիվ ուսանողների կողմից արված հարցումներին, ավելորդ դրագրություններից խուսափելու նկատառումով, չի պատասխանում: Դրամի փոխադրումը դադարեցնելու դեպքում Բյուրոն առաջադրություններ չի ուղարկում: Ամեն մի հեռակալող ինքը պետք և իմանա իր ուսման վարձի մուծման հերթական ժամկետը, հիշել և առանց հիշեցումի ժամանակին ուղարկի ուսման հերթական վարձը: Ուսման վարձի դիմաց դրոշմանիշներ և այլն չի ընդունվում:

Ղեկավարող կազմը յեվ որդաններ

Հեռակա ուսուցման ամբողջ սխեմայի ընդհանուր ղեկավարությունը իրագործում է Հ. Ս. Խ. Հ. Հոգեփոխարին կից Կադրերի Սեկտորը: Այս նպատակով Կադրերի սեկտորին կից գործում է Հեռակա ուսուցման Կենտրոնական Բազա (ՀՈՒԿԲ):

1. ՀՈՒԿԲ-ը բաղկացած է կազմակերպչական և ուսումնական մասից:

2. ՀՈՒԿԲ-ի գլուխը կանգնած է ՀՈՒԿԲ-ի վարիչը, վորին իրավունք և վերապահված հաստատված վարկերը տնորինել, աշխատակիցներ վարձել և արձակել և ներկայացուցիչը լինել այն հիմնարկների և կազմակերպությունների առաջ, նախորդը այդ ամենի մասին համաձայնության գալով Կադրերի Սեկտորի վարիչի հետ:

3. ՀՈՒԿԲ-ին կից հատուկ կանոնադրությամբ գործում է հեռակա ուսուցման խորհուրդը: Այդ խորհուրդի մեջ մտնում են ՀՈՒԿԲ-ի մասնաճյուղերի ներկայացուցիչները, հոգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

4. ՀՈՒԿԲ-ին կից կա ուսումնամեթոդական կարինետ. ըստ հարմարության այս կարինետը կարելի է կազմել Հեռուսխնստիտուտին կից:

5. ՀՈՒԿԲ-ի վարիչն ըստ անհրաժեշտության կարող է ունենալ լեքիու տեղակալ՝ ուսումնական և կազմակերպչական մասերի համար:

6. ՀՈՒԿԲ-ի ունի իրավական անձի բոլոր իրավունքները և սեփական կնիքը:

7. ՀՈՒԿԲ-ը ֆինանսավորվում է Հոգեփոխարին նախահաշվի, այլև դոտացիաների գծով:

5. Հեռակա ուսուցման (ՀՈՒԿԲ) կազմակերպչական խնդիրներն ու կառուցվածքը

ՀՈՒԿԲ-ը գործելու է ՀՍԽՀ Հոգեփոխարին կից: Նրա կազմակերպչական խնդիրներն են.—

1. Հեռակա ուսուցման կազմակերպումն ըստ ճյուղերի՝ ի նկատի ունենալով գյուղատնտեսության ռեկոնստրուկցիայի պահանջները:

2. Հեռակա ուսուցման միասնական սխեմայի մշակում:

3. Հեռակա ուսուցման պերսպեկտիվ և ռաբրատիվ պլանները մշակում:

4. Ոժտնդակություն հոգային որգաններին և դպրոցական հիմնարկներին՝ ՀՈՒԿԲ-ի կողմից մշակված պլանով հեռակա ուսուցում կազմակերպելու:

5. Հեռակա ուսուցման տարբեր ողակների իրավունքների և պարտականությունների սահմանում:

6. Հեռակա ուսուցման բոլոր ողակների քանակական և վորակական հաշվառքի ձևերի սահմանում:

7. Սովորողներին և ուսուցիչներին վերաբերող նյութական — իրավական հարցերի մշակում:

8. Հեռակա ուսուցման ամբողջ ցանցի ստուգում և հրահանգում:

9. Հեռակա ուսուցման գծով կատարած հրատարակչական գործի ղեկավարություն:

10. Տարբեր ճյուղերի հեռակա ուսուցման փորձի հաղորդակցում:

Նրա մեթոդական խնդիրներն են՝

1. Հեռակա ուսուցման գործի մեթոդական — հետազոտական աշխատանքների կազմակերպում:

2. Դիտողական պրոպագանդայի ռաբրատիվ հարցերի մշակում:

3. ԽՍՀՄ-ի մյուս հանրապետությունների փորձն ռաբրատիվ ձևերով միջոցների մշակում:

4. Դասատախտակներ, ծրագրերի, դասագրքերի և ուսումնական պրոպագանդայի, մեթոդական ցուցմունքների հատուցում և մշակում:

6. ԿԱՆՈՆ ԱՎՐՈՒԹՅՈՒՆ

Կենսոնական հեռակա ինստիտուտի յեվ սեխնիկումի, վոր գյուղատնտեսության սվյալ նյութի հեռակա ուսուցման աշխատանքն է դեկավարում

Ա. Հնդհանուր մաս

1. Գյուղատնտեսության գծով աշխատողների պատրաստութունն ու վորակի բարձրացումը հեռակա ուսուցման միջոցով զարգացական մակարդակին հասցնելու նպատակով՝ ՀԺԿ-ի գծով կազմակերպվում են կենտրոնական հեռակա ինստիտուտ և տեխնիկումներ՝ ըստ գյուղատնտեսական ճյուղերի:

2. Հեռակա ուսուցման գործի ուղիղ դրման պատասխանատվությունն ընկնում է ինստիտուտի կամ տեխնիկումի վարչի վրա:

Բ. Կենսոնական հեռակա ԲԳՈՒՀ-ի կամ սեխնիկումի խնդիրներ

3. Տվյալ գյուղատնտեսական ճյուղի հեռակա ուսուցման ամբողջ ցանցի անմիջական ուսումնական — մեթոդական ղեկավարությունը:

4. Տնտեսական միավորումների հետ միասին կազմել գյուղատնտեսության ճյուղի հեռակա ուսուցման ամբողջ ցանցի համար ծրագիր, դասատախտակ, մասնագիտական առարկաների ձեռնարկ և այլն:

5. Հեռակա ուսանողների պարապմունքների անմիջական մանկավարժական ղեկավարություն՝ ունենդիաների, լաբորատոր աշխատանքների և կոնսուլտացիայի միջոցով, մասնակից դարձնելով այդ ձեռնարկումներին մասնագետներին և մանկավարժներին, ինչպես և՛ վորակական և քանակական հաշվառք՝ խոշոր ձեռնարկություններում հենակետեր կազմակերպելու միջոցով:

Գ. Կառուցվածք

6. Հեռակա ինստիտուտի կամ տեխնիկումի գլուխը կանգնած է ինստիտուտի կամ տեխնիկումի գիրեկտորը: Անմիջական ղեկավարությունը իրագործում է նրա տեղակալը կամ պատասխանատու ղեկավարը, վորը միաժամանակ հանդիսանում է ուսման վարիչ:

7. Պատասխանատու ղեկավարը կամ ուսման վարիչը տնո-

րինում է հեռակա ուսուցման վարիչը, վարձում կամ արձակում է աշխատակիցներին, համաձայնեցնելով այդ տվյալ ինստիտուտի գիրեկցիայի հետ:

8. Հեռակա ուսուցման ինստիտուտին կից գործում է՝ Հեռուսրյուրո, վորի կազմի մեջ մտնում են ուսման վարիչը, տվյալ ինստիտուտի գիրեկտորը, կադրերի բաժնի ներկայացուցիչը, Գյուղատնտեսի ներկայացուցիչը, Կոնսուլտանտների կոլեգիա, վարը, առարկայական հանձնաժողովների նախագահներ և Հեռուսի համար հրավիրված ու նշանակված մասնագետներ:

Հեռուսրյուրոն քննում է պլանները, ծրագրերը, կազմակերպում պրակտիկում, մշակում մեթոդական ձեռնարկումներ և այլն:

10. Առարկայական հանձնաժողովներ, վորոնց կազմի մեջ մտնում են տվյալ առարկայի բոլոր կոնսուլտանտները և ունենդները, ինչպես նաև մասնակա շրջանի հեռակայողների մեկական ներկայացուցիչները: Կոնսուլտանտներից մեկը նշանակվում է առարկայական հանձնաժողովի նախագահ:

ՀԵՌԱՍ. ՈՒՍՈՒՑ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽ. ԿԱԶՄԸ — ՇՏԱՏ

Ա. Հեռուսուցման ինստիտուտ

1. Գիրեկտորի տեղակալ — ուսման վարիչ 1-միավոր. վերջինս միաժամանակ հանդիսանում է Հեռուսրյուրոյի նախագահը:

2. Քարտավար — թղթակից — քարտուղար 1 միավոր

3. Հաշվետար — եքսպեդիտոր 1 »

4. $\frac{1}{2}$ միավորով տեխնիկական աշխատակից

5. Տեղերի վրա կոնսուլտացիաներ կազմակերպելու համար նախատեսված հրահանգիչների շտաբը հանվում է: Այդ աշխատանքները պետք է կազմակերպել արտադրական պրակտիկայի զնացող 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողների միջոցով, իրեն նրանց աշխատանքների անհրաժեշտ տվյալները մեկը:

Բ. Հեռուս սեխնիկում

6. Կալուսն տեխնիկումի ուսման վարիչը զուգընթաց վարելու չէ նաև հեռակա տեխնիկումի վարիչի պաշտոնը, իր աշխատավարձի 50% - ի սահմանների վարձատրություն պայմանով:

7. Քարտավար — քարտուղար — թղթակից 1 միավոր

8. Յեվ կես վարձատրությամբ մի տեխնիքական աշխատավոր:

Առարկայական հանձնաժողովներ

Առարկայական հանձնաժողովի կազմի մեջ մտնում են տրվյալ առարկայի բոլոր ղեկավարները, դասատուները և ղեկավարները վճռական ձայնով:

Ուսմասի տեղակալը դասատուներից մեկին նշանակում է նախագահ:

Հանձնաժողովի խնդիրներն են՝

1. Որագրերի կազմում և քննություն:
2. Գրավոր առաջադրությունների մշակում և քննություն:
3. Դրախտման և զբաղման կոնսուլտացիայի մեթոդիկայի քննություն և հաստատում:
4. Բանավոր կոնսուլտացիայի ղեկավարություն:
5. Մեթոդական նամակների և կոնսուլտացիայի ղեկավարություն:
6. Քննություն դասավոր և հանձնաժողովի ղեկուցման՝ տվյալ առարկայի վիճակի և առաջադիմության մասին:
7. Դասագրքերի ընտրություն ու քննություն և դիտողությունների հանձնում Հեռուստատեսության:
8. Լրացուցիչ գրականության քննություն:
9. Առարկային վերաբերող աշխատանքների պլանի մշակում մը հենակետերում:
10. Ղեկավարություն և ստուգում (ուսմասի միջոցով) դասատուների, ղեկավարների և ղեկավարների աշխատանքների հենակետերում և լաբորատորիաներում:

Առարկայական հանձնաժողովի նախագահի

Պարտականություններն են՝

1. Առարկայական հանձնաժողովի աշխատանքների ղեկավարություն:
2. Այդ աշխատանքների որացուցային պլան, վոր ընդունվելու յե առ. հանձնաժողովի կողմից և հաստատվել ուսմասի կողմից:
3. Դասատու-ղեկավարների ընտրություն և նրանց աշխատանքների հսկողություն:
4. Ուսանողի առաջադիմության հաշվառման հսկողություն:
5. Առարկայական հանձնաժողովի աշխատանքների հաշվառման կազմում և ղեկուցում առարկայի դրություն մասին վորոշ ժամանակաշրջանում (կուրսանտների թիվը, խմբերն ու նրանց

կազմը, ուսանողների խմբերի աշխատանքների տեմպը, ծավալը, ղեկավարների վորակը, կոնսուլտացիաների և նամակագրությունների արդյունքները և այլն):

6. Առարկայական հանձնաժողովի և ուսուցիչների մանկավարժական վորոշ ընդհանրացումը՝ դրա հիման վրա՝ տվյալ առարկայի հեռակա ուսուցման մեթոդական հարցերի մշակում:

7. Թղթակցություն կուրսանտների հետ մեթոդական նամակների և պարբերագրերում հրատարակվող մանկավարժական հոդվածների միջոցով:

8. Ուսանողներին և հենակետերին ուղղված ստանդարտ նամակների կազմում մեթոդական—կազմակերպչական հարցերի մասին:

9. Մասնակցություն տեղերում կոնֆերանսներ կազմակերպելու գործին և այդ կոնֆերանսների աշխատանքներին:

10. Առաջադրությունների առաքման պլանի կազմում:

11. Ըստ ուսմասի պահանջի՝ կուրսանտներին գրավոր և բանավոր հաշվետվությունների հանձնման կազմակերպում:

12. Ըստ ուսմասի առաջադրության՝ լաբորատոր նյութակազմի կազմակերպում:

13. Տեղի կոնսուլտանտների հետ կապի պահպանում և հրահանգում:

14. Կուրսերի հրապարակած առաջադրությունների, դասախոսությունների և այլ ուսումնական նյութերի խմբագրում:

15. Ղեկավարություն «Ըստ բաշխման» ընդունված 12 ուսանող ունեցող խմբակի:

16. Իբրև անդամ՝ մասնակցություն մեթոդական աշխատանքներին:

17. Տասնորյակում 4 ժամ (2 անգամ) հատկացնել հետևելու ուսանողների աշխատանքներին, դասատու-ղեկավարների աշխատանքներին, ղեկավարների վորակին և այլն:

Դասառնում

1. Առարկայական հանձնաժողովի անդամ է վճռական ձայնով:

2. Գրախոսում է իրեն հանձնված խմբակի գրավոր աշխատանքները:

3. Իր առարկայի բովանդակության ու մեթոդների մասին իր հետևողներին գրավոր կոնսուլտացիա յե տալիս:

4. Հետևում է իր ուսանողների առաջագիմությանը, ուստի այս նպատակով կազմում է ուսումնական մեթոդական նյութեր, ձեռնարկներ, դասախոսություններ:

5. Հաշվետու չե առարկայական հանձնաժողովի առաջ իր խմբի աշխատանքների արդյունքների մասին:

6. Կազմում է իր խմբի բնութագիրը:

7. Անց է կացնում կարճատև կոնֆերանսներ տեղերում:

8. Կուրսերին կից տալիս է բանավոր կոնսուլտացիա:

9. Հանձնաժողովի առաջադրությամբ սեփական համար մշակում է բանավոր և գրավոր ստուգումների ձևեր:

10. Գրախոսելիս ղեկավարվում է ղեկնորդներին ընդհանուր հրահանգներով և առարկայական հանձնաժողովի, նախագահի և ուսմասի ցուցմունքներով:

11. Գրախոսն առնվազն 5 օրը մի անգամ այցելում է գրասենյակը, բաց կարող է հեռուսների գրավորների ստացումն ու հանձնումը կատարել իր կողմից լիազորվածի միջոցով: Գրավորների չե ուղարկումը պիտի լինի փոստով, այն ել պատվիրված:

12. Ամենաշատը չեք օրվա ընթացքում գրախոսը նայում է վերադարձնում գրավորները:

13. Կայուն գրքույքով վարձատրվող դասատուները 5 օրում 2 անգամ պիտի անցնեն գրասենյակ գրավորներն ստանալու և իր առարկայի դրուկյան մասին տեղեկանալու համար:

14. Հետևյալն նամակ գրելիս գրախոսը պետք է՝

ա) նամակի վերևը գրի հեռուսի անունը և թիվը:

բ) նամակի բնադրի տակը գրի թվականը (նամակի վերևում գրասենյակին և գրում ամսաթիվը ու տարեթիվը):

գ) նամակը պետք է պարունակի կարևոր ցուցմունքներ և զիտողություններ և մոչ թե լակոնական գնահատումներ:

դ) Գրավորի յուրաքանչյուր եջի վրա պիտի լինի գրախոսի դիտողությունները, իսկ վերջին գնահատությունն (բառերով՝ բավարար, անբավարար, լավ):

16. Դասատուն գրախոսական թերթիկում պիտի գրի ուսանողի աշխատանքի հաջիլքն բնութագրելը:

17. Դասատուն պատասխանում է ուսանողի տվյալ դասավանդմանը վերաբերվող հարցերին (ընդհանուր հարցերին գրասենյակին և պատասխանում):

18. Գրախոսը լավ ծանոթ պիտի լինի իր հեռուսների անկետաներին և նրանց բոլոր գործերին:

Հրահանգ հեռակա կուրսերի դասատուների համար

1. Դասատուն 5 օրը մի անգամ, իր նշանակած օրը, մշակում է կուրսերի գրասենյակը, կուրսանտների աշխատանքն ստանալու:

2. Դասատուն 3 օրվա ընթացքում անմիջապես կամ իր կողմից ձեռքով պետք է վերադարձնի գրավոր աշխատանքը՝ ուղղված կամ չուղղված:

3. Առարկայական հանձնաժողովի նախագահը գրասենյակին այցելելիս պիտի նախ դասատուների կողմից ուղղված աշխատանքները, վոր այդ օր գրասենյակում կան և մակագրի:

4. Դասատուն պետք է կուրսերի գրասենյակին ասի, թե մոտավորապես յ՞բրը է տանը լինում կամ ինչպես թղթակցություններն իրեն հանձնեն:

5. Թղթակցի պարսկանություններ

1. Թղթակցությունների ընդունում և գրանցում:

2. Նայում է գրությունները, անհրաժեշտ նյութերն ու տեղեկանքները՝ դատում և թղթակցությունը հանձնում քարտուղարին:

3. Ստացված գրությունները հանձնում է ըստ պատկանելության—գրասենյակին՝ քարտուղարին, դասատուին, կցում գրավոր աշխատանքներին:

4. Ստանդարտ և տիպային գրագրություն է կատարում: Թղթեր է կազմում ըստ քարտուղարի ցուցմունքի:

5. Գրանցում է ուղարկվող գրությունները:

6. Տեղեկանքներ է տալիս:

7. Նշանակում է կուրսանտի նոր հասցեն:

8. Կուրսերի վարելին կամ տեղակալին է նայելու տալիս այդ օրվա կատարած թղթակցությունը:

9. Հետևում է գրությունների առաքմանը և ստացմանը և դասավորում:

6. Եֆապեդիսոյի պարսկանություններ

1. Փոստատարից կամ փոստիկից թղթակցությունների ընդունում:

2. Կուրսանտների աշխատանքի վրա նյութերի ստուգում:

3. Նյութերի և գրությունների (ըստ հանձնարարության):

4 Առաքված թղթակցության վորոշումն ըստ քաշի և բովանդակության:

5. Պատվիրված թղթակցության զատում և համարակալում (ըստ կուրսանտների համարի, հասցեն դռնակու համար):

6. Փոստ (ծրարի վրա մակագրել բովանդակությունը, հասցեն փակցնել, ծրարել, ծանրոցները կշռել, նամակադրոշմ փակցնել, առաքման գրքում նշել թվականը, կուրսառնտի համարը, և ազգանունը, առաքման գինը, բովանդակությունը):

7. Թղթակցությունները փոստը տանել:

8. Ծախսերը գրել որագրում (նամակադրոշմի) և լերկշաբաթյա հաշվետվություն կազմել:

9. Հասցեները պահել:

10. Գրասենյակի համար մանր գնումներ կատարել:

11. Հաշվով գրքեր դուրս տանել և ստանալ:

12. Հրատարակությունների պահեստը պահպանել և հաշվառել:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՍԻՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՀԱՆԳ ՀԵՌԱԿԱ ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտ է հեռակա ուսուցման հիմնարկի ուսումնական-մեթոդական աշխատանքները լավ կազմակերպել համախմբաբերով նրանց համար բարենպաստ բոլոր պայմանները:

2. Այդ ուսումնական-մեթոդական աշխատանքների կառուցվածքը վորոշող հիմնական մոմենտներն են՝

ա) Որգանական կապ այն կայուն դպրոցական հիմնարկի հետ, վորի կազմի մեջ մտնում է հեռակա ուսումնական հիմնարկը և վորի գիտական և մանկավարժական փորձը պիտի ոգտագործել:

բ) Սերտ կապ այն արտադրության տեխնիքական անձնակազմի հետ, վորտեղ հեռակայողը աշխատում է, վորպեսզի հնարավոր լինի տեսական և գործնական ուսուցումը շարժապել:

գ) Մեթոդական աշխատանքներին անպայման պետք է մասնակցեն մասնաճյուղային հեռակա դպրոցական հիմնարկի ամբողջ կազմը և այդ աշխատանքների մեջ պետք է ներգրավվեն կայուն

դպրոցական հիմնարկի ամբողջ կազմի, ինչպես նաև տվյալ տնտեսական ձեռնարկությունը, սակայն, միաժամանակ պետք է խրատիվ կիրառել միանձնյա ղեկավարության և պատասխանատվության սկզբունքը:

դ) Կազմակերպել հեռակա դպրոցական հիմնարկների փորձի փոխանակություն:

3 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԳԻ ԲՈՎԱՆՊԱԿՈՒՅՈՒՆՆԵՐ

ա) Սուսումնական — մեթոդական բնութագրերի, ուսումնական պլանի, ծրագրերի, աշխատանքների որացուցային պլանի և արտադրական ուսուցման հրահանգչական թերթիկների մշակում:

բ) Ուսումնական պիտույքների (դասագիրք, քարտեզ և այլն) և առաջադրությունների քննություն, մշակում, կազմում:

գ) Գրախոսման և կոնսուլտացիայի սիստեմի մշակում:

դ) Հեռակայողների առաջադիմության հաշվառման ձևերի մշակում:

ե) Հեռակայողների ուսումնական աշխատանքների կազմակերպում:

զ) Արտադրական ուսուցման, արտադրական առաջադրությունների և բարորատոր պարագմունքների սիստեմի մշակում:

է) Ուսումնական ամբողջ փորձի կազմակերպության մշակում (դասավանդման դասադան ձևերի փոխհարաբերության, կոնսուլտացիաների, կոնֆերանսների առաջադրության անցնելու կարգի և ուսուցման այլ տարրերի համադրություն):

ը) Ընթացիկ հաշվառք և ուսուցման արդյունքների քննություն:

4. Հեռակա և կայուն դպրոցական հիմնարկների կապն արտահայտվում է նրանով, վոր վերջիններիս աշխատակիցները—և վարչական, և գիտական-մանկավարժական—նման աշխատանք են կատարում նաև հեռակա դպրոցական հիմնարկների համար, ալև նրանով, վոր լերկու տիպի դպրոցների համար ել մի միասնական մեթոդական խորհուրդ ունենան և հեռակա ուսուցման հիմնարկն իր ներկայացուցչությունն ունենա կայուն դպրոցական հիմնարկի մեթոդական որգաններում:

5. Կապը ձեռնարկության (տեխնիկական անձնակազմի) հետ պահպանվում է հեռակետերի միջոցով: Արտադրության մեջ գրա

նվող այդ հենակետերն ուսումնական-մեթոդական աշխատանքներին մասնակցում են՝ կազմակերպելով անմիջական խորհրդակցություններ, հարմարեցնելով արտադրական ուսման ծրագրերն ուսանողի նկարագրին և արտադրություն պայմաններին, մշակելով արտադրական խնդիրներ՝ հեռակա դպրոցական հիմնարկի մշակած մեթոդներով և հաշվառելով հեռուստի առաջադիմությունները:

6. Արտադրության հետ կապը պահպանվում է կոորդինացիոն բաժինների միջոցով, վորոնք՝ ա) ուսումնասիրում են արտադրությունն իր ամբողջությամբ, բ) այն առանձին ձեռնարկությունները, վորտեղ աշխատում են հեռուստ, գ) մշակված են արտադրական ուսուցման ծրագրերը՝ կապված տեսականի հետ, դ) ստուգում են արտադրական ուսուցման կատարումը:

Կոորդինացիոն բաժինը կազմված է գլուղատնտես արտադրողներից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Կոորդինացիոն բաժինները սպասարկում են և՛ հեռակա և՛ վոչ հեռակա դպրոցական հիմնարկներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Այդ բաժինների հետ միասին, ըստ հնարավորին (բոլոր հեռակա դպրոցներում) պետք է կազմակերպել արտադրական ուսուցման մասին խորհրդակցություններ՝ այն արտադրության աշխատակիցների մասնակցությամբ, վորտեղ սովորում են հեռուսները:

7. Մասնաձևողային հեռակա դպրոցական հիմնարկի ուսումնական-մանկավարժական կազմը մեթոդական աշխատանքներին մասնակցում է առարկայական հանձնաժողովների, մեթոդական հանձնաժողովների և մեթոդական բյուրոների միջոցով:

Այդ սրգանները ղրադվում են Յ-րդ կետում հիշված հարցերով:

8. Ուսումնական մասը պիտի հետևի, վոր ձեռագրերն ու ձեռնարկները համապատասխանեն ծրագրերին և առաջադրության մեթոդիկային:

9. Հեռուսների և գրախոսների դիտողությունները ձեռնարկների մասին պետք է ամսե-ամիս ամփոփվեն ուսմասի կողմից և դիտողություններով հանդերձ ուղարկվեն հեղինակին, վոր ի նշանակալի ունենա գրքի վերահրատարակության գեպղում, կամ նույնիսկ տիրաժի սպառումից շատ առաջ, յեթե դիրքը համապատասխան չէ ուսուցման պայմաններին:

10. Ուսումնական-մեթոդական աշխատանքները պետք է

առարկեն ըստ որոշուցային թեմատիկ պլանի՝ թեմաները բաժանելով մեթոդական որդանների անդամների մեջ: Հաճախ նույն թեման տալ յերկու հոգու՝ զեկուցողին և զեկուցակցին:

11. Առանձին դպրոցական հիմնարկների փորձի փոխանակությունը կարելի չէ կատարել, կոնֆերանսների և տեղերի նյութերը պարբերաբար հրատարակող ժուրնալների միջոցով:

12. Մասնաձևողային հեռակա դպրոցական հիմնարկների մեթոդական աշխատանքների ընդհանուր համակարգությունն իրագործվում է ՀՈՒԿԲ-ի ուսումնական մասի և ուսմեթկարներնտի միջոցով:

ՀՐԱՀԱՆԳ

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռակա ուսուցման համար դասադրքեր կազմելիս պիտի նշանակալի ունենալ՝ ա) հասակավորների արտադրողական ուսուցման ժամանակակից մեթոդիկայի ընդհանուր պահանջները, վոր վերաբերվում են թե հեռակա և թե վոչ հեռակա ուսուցմանը, բ) այն յուրահատուկ պայմանները, վոր վերաբերվում են մասնավորապես հեռակա ուսուցմանը:

1. ԸՆԴԻՈՒՄՈՒ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՍԿԳՐՈՒՄԵՆԵՐ

1. Դասադիրքը հանդիսանում է նախ և առաջ սովորողի աշխատանքային փորձի կազմակերպման գործիք: Ուստի ի նկատի պիտի առնել հասակավորի պահանջները, և վոչ թե ուսումնական նյութերը փոխադրել փոքրահասակների դասադրքերից:

2. Դասադիրքը կազմելու մեթոդիկան պետք է յեղակետ ունենա բուն արտադրական աշխատանքի գործնականը և այն դարձնի տեսական իմացությունների հաղորդման հիմք:

3. Թեմաների ընտրությունն ու նյութերի ներքին կապակցությունը պետք է կառուցված լինի դյուղատնտես, սոցիալիստական վերակառուցման և յերկրի ինդուստրացման խնդիրներին կապակցության վրա:

2. Հեռակա ուսուցման մեթոդիկան

1. Տովլալ կուրսի ամբողջ անցնելիք նյութը պիտի մանրակրկիտ և համաչափ բաշխել ըստ առաջադրությունների, վորպեսզի թե ամեն մի առաջադրության նյութը հնարավոր լինի լավ մշակել և թե ուսուցման զեկավարումը դյուղանա:

2. Յուրաքանչյուր առաջադրութեան մեջ պետք է՝ ա) տրվի թեմայի նպատակային դրույթը (առաջին առաջադրութեան մեջ տրվում է ամբողջ դասնթացի նպատակադրումը), բ) բացատրվի այդ առաջադրութեան մշակման պլանը:

3. Նյութը պետք է բաշխվի տվյալ առաջադրութեան մշակման ժամանակամիջոցի սահմաններում:

4. Առաջադրութեան յուրաքանչյուր մաս պետք է փակվի կադմակերպչական և ուսումնական մշակմանը վերաբերող հարցերով:

5. Առանձին հարցերին ու թեմաներին վերաբերող որինակներն ու վարժությունները պիտի որինակելի մշակման լեզվաբանությամբ:

6. Պետք է կարճ, բայց պարզ և վորոշ ձևաբանել ամեն մի հետևություն, կանոն, որենք և այլն:

7. Պետք է խթանել, վոր հետևանք իր ստացած խնայություններն արտադրական իր գործունեություն մեջ կիրառի:

8. Պետք է խթանել ուսանողի ուսումնական ստեղծագործությունը (ինքնուրույն որինակներ ու խնդիրներ կադմակ, դիտողություններ անել և այլն):

9. Այնպիսի ստեղծողական հարցեր ու խնդիրներ պիտի ընտրել, վոր արտացոլեն ամբողջ անցածը:

4. Առաջադրության պլանը

Հետևյալ ուսուցման յուրաքանչյուր առաջադրություն պիտի կադմված լինի հետևյալ պլանով.—1) Մեթոդական ցուցմունքներ, 2) ծանոթություն առարկային և կոնկրետ արտադրական նյութին. 3) հիմնական թեզերի տեսական հիմնավորում, 4) թվական տեղեկատու տվյալներ, 5) գործնական աշխատանքներ՝ ստեղծողական հարցերի, որինակներ, վարժությունների և խնդիրներ ձևով. 6) լարորատոր մշակում կամ գործնական աշխատանքներ արհեստանոցներում՝ սովորելու նյութի հիման վրա. 7) նորագույն նվաճումները. 8) գրականության համառոտ ցուցակը:

5. Շարադրելու մեթոդներ.

1. Հետևյալն ամեն մի դասարնթացի սկզբին պետք է մեթոդական ցուցմունքներ տալ՝ ուսումնական աշխատանքներին ինքնուրույն կերպով կադմակելու կարենալու համար:

Ուսումնական նյութի ամբողջ մշակումն ու շարադրումը հիմնված պիտի լինի հետևյալ ինքնուրույն աշխատանքի վրա:

Յուրաքանչյուր առաջադրություն պետք է ընդգրկի հարցերի վորոշ ամբողջացած շրջան:

2. Յուրաքանչյուր առաջադրություն պետք է սկսել արտադրողական կողմնորոշման այնպիսի հարցերով, վորոնք հետևյալն կառաջանորդեն դեպի նրան ծանոթ արտադրական կարգ ու սարքը և միաժամանակ, տվյալ թեմայի մշակման ծավալն ու պլանը կը նշեն. վորովհետև հետևյալ արտադրական աշխատանքի պրակտիկան պետք է կադմի տեսական խնայությունների ընդհանրացումներն: Հարցերն այնպես պետք է ընտրել, վոր նրանք կարենան նպատակադրված ընդհանրացումներին հանգել:

Յեթև այս դեպքում կարելի է լինում չերեմն շոշափել հետևյալն անծանոթ մի առարկա կամ պրոցես, ապա այն պետք է շատ մանրամասն և վորոշ նկարագրել, վոր հետևյալ լավ պատկերացնել կարողանա, վորպեսզի հետագայում հարավոր լինի հենվել դրա վրա:

3. Տեսարանական հիմնավորումը պետք է համապատասխան լինի հետևյալ ընդհանուր պատրաստությունը և միաժամանակ տվյալ կոնցենտրի պահանջներին: Անհրաժեշտ է, ըստ պահանջի հարկին, առաջին կոնցենտրում համառոտակի վերածել մասնատրկայի, ֆիզիկայի և քիմիայի հիմնական գաղափարները, հիշելով հետևյալ անցած դասարգրքերի համապատասխան պարագրաֆները: Դժվար ապացուցելի թեզերը գերադասելի չեն տալ պատրաստի ֆորմուլաների և կանոնների ձևով: Յուրաքանչյուր ֆորմուլի տառերի նշանակությունը պիտի բացատրել գործնականից վերցրած թվերի որինակների վրա: Ցանկալի չեն ըստ հնարավորին անալիտիկ բացատրությունը փոխարինել գրաֆիկով, յեթև սա լիովին պարզ է և շոշափելի:

4. Տեղեկատու թվական տվյալները պետք է լինեն ցայտուն և լրիվ՝ առանց խճողելու բնագրերը:

